

"2022թ. ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ"

ՄՐՑՈՒՑԹԻ 13-ԸՆԴՈՒՄ ԾՐԱՍԵ

II ՓՈՒԼ

"2022թ. ՀՀ մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչ" անվանակարգում հայտարարված մրցույթի 13-րդ շրջանի առաջին փուլին ներկայացվում է հինգ հարցից բաղկացած մեկ հարցաշար, մեկ խնդիր, առաջադրանքներ՝ "Հակասություններ և բացահայտումներ" ու "Գրագիտություն և իրազեկվածություն" թեմաներից, ինչպես նաև հոգեմտածողությանը վերաբերող առաջադրանքից:

Հարցաշարի ճիշտ պատասխանները կգնահատվեն յուրաքանչյուրը 2 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր (առավելագույնը՝ 10 միավոր):

Խնդրի ճիշտ պատասխանը կգնահատվի 5 միավոր՝ սխալ պատասխանը՝ 0 միավոր (առավելագույնը՝ 5 միավոր):

"Հակասություններ և/կամ բացահայտումներ" առաջադրանքի ճիշտ պատասխանը կգնահատվի 3 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

"Գրագիտություն և իրազեկվածություն" առաջադրանքի ճիշտ պատասխանը կգնահատվի 5 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

"Հոգեմտածողություն" առաջադրանքի ճիշտ պատասխանը կգնահատվի յուրաքանչյուրը՝ 1 միավոր (առավելագույնը՝ 24 միավոր):

Երկրորդ փուլին ներկայացված առաջադրանքներից հնարավոր է վստահեցնել առավելագույնը 47 միավոր:

Երկրորդ փուլին ներկայացված առաջադրանքներից առավել բարձր միավորներ հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Երկրորդ փուլի առաջադրանքների պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2022թ. հուլիսի 24-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն www.gortsq.am կայքէջում՝ 2022թ. հուլիսի 25-ին:

ՌԵՇԵՄԱՆՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, HR-ի միջազգային խորհրդանիշով ոսկեպատ շքանշանը, հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2023 թվականի փետրվարին՝ Ծաղկաձորում:

"2022թ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ"

ՄՐՑՈՒՑԹԻ 13-ԸՆԴՈՒՄ ԾՐԱՍԵ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈՒԼԻ

ՀԱՐՑԱՇԱՐԸ ԵՎ ՊԱՏԱՄԽԱՆԸ

1. Աշխատողի համար գործատուն սահմանել է փորձաշրջան՝ 3 ամիս տևողությամբ՝ 2020թ. նոյեմբերի 30-ին: Ո՞ր օրն է համարվում փորձաշրջանի վերջին օրը՝

ա) փետվարի 28-ին հաջորդող առաջին աշխատանքային օրը.

բ) փետվարի 28-ը.

գ) մարտի 1-ը:

2. Գործատուն իրավունք ունի մեկ հրամանով հանել Մեկ տարվա ընթացքում երկու կարգապահական տույժ ունեցող աշխատողի երկու կարգապահական տույժերը՝

ա. այո, կարող է.

բ. ոչ չի կարող.

գ. կարող է, եթե աշխատողը խոստացել է այլևս թույլ չտալ կարգապահական խախտում:

3. Ամենամյա արձակուրդի ընթացքում աշխատողին կարելի է ծանուցել աշխատանքի էական պայմանները փոփոխելու մասին՝

ա. կարելի է, եթե աշխատանքի էական պայմանները պետք է փոփոխվեն ամենամյա արձակուրդի վերջին օրվան հաջորդող առաջին օրը.

բ. կարելի է, սակայն ծանուցման ժամկետը պետք է երկարաձգել ամենամյա արձակուրդին համընկնող ժամանակահատվածի չափով.

գ. "ա" և "բ" պատասխանները սխալ են:

4. Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվողին փոխարինել է մեկ այլ անձ: Գործատուն աշխատանքի էական պայմանների փոփոխության մասին ու՞մ պետք է ծանուցի՝ երեխայի խնամքի արձակուրդում գտնվողին, թե նրան փոխարինողին:

ա. մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվողին.

բ. մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվողին փոխարինող աշխատողին.

գ. "ա" և "բ" պատասխանները սխալ են:

5. Պարապուրդում գտնվող աշխատողը ձեռք է բերել ամուսնության համար չվճարվող արձակուրդի իրավունք՝ 3 օր տևողությամբ: Նա դիմել է գործատուին իրեն չվճարվող արձակուրդ տրամադրելու և պարապուրդի ժամկետը երկարաձգելու խնդրանքով: Որն է գործատուի գործողությունները (գտնել սխալ պատասխանները)՝

ա. գործատուն պետք է բավարարի աշխատողի խնդրանքը.

բ. գործատուն կարող է բավարարել աշխատողի խնդրանքը՝ մասնակիորեն. աշխատողին տրամադրի 3 օր չվճարվող արձակուրդ և չերկարաձգի պարապուրդի ժամանակահատվածը.

գ. "ա" պատասխանը ճիշտ է, "բ" պատասխանը սխալ:

"2022Թ.ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ"

ՄՐՑՈՒՅԹԻ 13-ՐԴ ՇՐՋԱՆԻ II ՓՈՒԼԻ

ԽՆԴԻՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ամուսնացած աշխատողը ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր, դիմել է գործատուին, խնդրելով, որ իրեն տրամադրվի ամուսնական արձակուրդ, քանի որ ամուսնանում է իր ամուսնու հետ երկրորդ անգամ: Նա իր խնդրանքը պատճառաբանել է այն հանգամանքով, որ առաջին ամուսնությունը եղել է քաղաքացիական բնույթի: Գործատուն մերժել է նրան չվճարող արձակուրդ տրամադրելու խնդրանքը, պատճառաբանելով, որ նույն անձի հետ ամուսնանալիս արդեն մեկ անգամ տրամադրվել է ամուսնական արձակուրդ: Գնահատեք գործատուի գործողությունները:

Պատասխան՝

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ճանաչվում է միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնությունը:

"Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին" ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նախկինում ամուսնության պետական գրանցում ունենալու դեպքում նախորդ ամուսնությունը դադարելու հիմք հանդիսացող փաստաթուղթը կամ պատճենը (ամուսնալուծության վկայականը կամ ամուսնալուծության մասին օրինական ուժի մեջ մտած դատավճիռը կամ ամուսնու (կնոջ) մահվան վկայականը), եթե էլեկտրոնային միասնական գրանցամատյանում հիմք հանդիսացող փաստաթուղթը բացակայում է.

Հետևաբար, գործատուն պետք է բավարարի աշխատողի խնդրանքը և նրան տրամադրի 3 օր չվճարվող արձակուրդ:

"2022Թ.ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ"

ՄՐՑՈՒՅԹԻ 13-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈՒԼ

"ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ/ԿԱՍ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ"

Բացահայտել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ և 216-րդ հոդվածներում առկա անհամապատասխանությունը և ներկայացնել առաջարկություն:

Պատասխան

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի համաձայն՝ "աշխատողը պարտավոր է բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտավորությունները . . .": Փաստորեն, ըստ այս հոդվածի պարզվում է, աշխատողն ունի աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտավորություններ, մինչդեռ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածը, որը սահմանում է աշխատանքային պայմանագրում պարտադիր կարգով ներառման ենթակա պայմանները, բացակայում է աշխատողի պարտավորությունները ներառման պարտադիր պայմանը:

"2022Թ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ"

ՄՐՑՈՒՅԹԻ 13-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈՒԼ

"ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ"

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 12 հոդվածներում օգտագործվում է "երաշխիք" բառը, 23 հոդվածներում՝ "հատուցում" բառը: Նույնիսկ 20-րդ գլխի վերնագիրը անվանվում է "Երաշխիքներ և հատուցումներ": Ինչ բովանդակային տարբերություններ կան "երաշխիք" և "հատուցում" բառերի միջև:

Պատասխան

Երաշխիքներն այն միջոցները, եղանակներն ու պայմաններն են, որոնց օգնությամբ ապահովվում է քաղաքացիների (աշխատողների) ընդհանուր կամ հատուկ իրավունքների և ազատությունների իրականացումը (ՀՀ վճռաբեկ դատարանի 2016թ. հուլիսի 22-ի ԵԷԴ/3838/02/14 որոշում): Երաշխիքը որևէ բանի անպայման կատարվելը՝ տեղի ունենալը՝ պահպանվելը հաստատող խոստում:

Հատուցում է՝ համարվում այն դեպքը, երբ նախապես վճարվում է՝ որևէ բան կատարելու համար:

"2022Թ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ"

ՄՐՑՈՒՅԹԻ 13-ՐԴ ԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ II ՓՈՒԼԻ

ՀՈԳԵՍՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Անհրաժեշտություն է առաջացել կազմակերպել գործարար ճաշ (բիզնես-լանչ):

Ստորև ներկայացվում է գործարար ճաշին (բիզնես-լանչին) վերաբերելի էտիկետի հարցեր, որոնք պետք է պահպանեն, թե հրավիրող և թե հրավիրվող կողմը:

Դուք չեք կարող սխալվել, չէ որ ցանկանում եք դառնալ մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչը:

Ձեր կարծիքով՝

1. Ո՞ր մակարդակի պաշտոնիայի կարո՞ղ եք հրավիրել գործարար ճաշի (բիզնես-լանչի)։

1. Պատասխան՝ պետք է հրավիրել գործարար ճաշի (բիզնես-լանչի) միայն ձեր կոլեգային կամ կրտսեր աստիճանի գործընկերոջը, բայց ոչ ձեր պաշտոնից ավելի բարձր պաշտոնիայի:

2. Գործարար ճաշից (բիզնես-լանչից) որքա՞ն ժամանակ առաջ պետք է հրավիրեք ձեր գործընկերոջը:

2. Պատասխան՝ գործարար ճաշից (բիզնես-լանչից) առնվազն 2 օր առաջ:

3. Ո՞վ պետք է ընտրի գործարար ճաշի (բիզնես-լանչի) անցկացման վայրը:

3. Պատասխան՝ գործարար ճաշի (բիզնես-լանչի) անցկացման վայրը ընտրում է հրավիրող կողմը:

4. Եթե ձեր հյուրը ձեր ազգից չէ, ապա ի՞նչ ռեստորան պետք է ընտրել՝ Ձեր ազգային, հյուրի ազգային խոհանոցի ռեստորան, թե այլ:

4. Պատասխան՝ գործարար ճաշ (բիզնես-լանչ) չի կարելի կազմակերպել ազգային խոհանոցի ռեստորաններում, քանի որ հյուրը կարող է չսիրել ձեր ազգային խոհանոցը, ինչն էլ կարող է վիրավորել նրան:

5. Ինչ վարկանիշ ունեցող ռեստորան պետք է ընտրել.

5. Պատասխան՝ պետք չէ ընտրել ամենաէժանր կամ, ընդհակառակը, ամենաթանկը, ավելի լավ է ընտրել "ոսկե միջինը":

6. Ե՞րբ պետք է լինել գործարար ճաշի վայրում:

6. Պատասխան (հրավիրողի դեպքում)՝ անհրաժեշտ է ռեստորան գալ նշանակված ժամից 30 րոպե առաջ՝ ստուգելու՝ արդյոք ամեն ինչ կարգին է և հանդիպելու ավելի վաղ ժամանած հյուրերին: Եթե հանդիպումը "տետ-ա-տետ" է, իսկ հյուրը ուշանում է, ապա պետք է նրան սպասել ոչ պակաս 30 րոպե:

6. Պատասխան (հրավիրվողի դեպքում)՝ երբեք շուտ չներկայանալ և 30 րոպեից ավելի չուշանալ:

7. Հյուրն ուշանում է ավելի քան 30 րոպե: Ինչ պետք է անել՝ զանգել, հաղորդագրություն ուղարկել, թե հեռանալ:

7. Պատասխան՝ զանգելը և հաղորդագրություն ուղարկելը խստիվ արգելվում է՝ առաջին 30 րոպեի ընթացքում: Հեռանալ կարելի է պայմանավորված ժամից մեկ ժամ հետո: Եթե հյուրերը մեկից ավելի են, և նրանցից մեկը ուշանում է, կարող եք սպասել նրան, բայց ոչ ավելի, քան 10 րոպե, հակառակ դեպքում մնացած հյուրերին անհարմար վիճակի մեջ կդնեք:

8. Ի՞նչ հագուստով պետք է ներկայանալ հանդիպմանը (հարցին պատասխանել հրավիրողի և հրավիրվածի տեսանկյունից):

8. Պատասխան՝ Եկու դեպքում էլ գործարար ճաշի (բիզնես-լանչի) համար իդեալական հագուստը գործարար մարդու սովորական հագուստն է, այսինքն՝ գործնական կոստյումը:

9. Ո՞վ պետք է ընտրի ուտեստը:

9. Պատասխան՝ ուտեստի ընտրությունը պետք է թողնել հրավիրված կողմին:

10. Ո՞վ պետք է ընտրի խմիչքը:

10. Պատասխան՝ հյուրը:

11. Ինչ ուտեստ և խմիչք, պետք է պատվիրի հրավիրող կողմը:

11. Պատասխան՝ ցանկալի է, որ հրավիրող կողմը պատվիրի այն ուտեստն ու խմիչքը, ինչը պատվիրել է հրավիրված կողմը, նույնիսկ եթե դա այնքան էլ իր սրտովը չէ:

12. Որքա՞ն ժամանակ պետք է տևի գործարար ճաշը (բիզնես-լանչը)։

12. Պատասխան՝ ամենաերկար գործարար ճաշը (բիզնես-լանչը) կարող է տևել ոչ ավելի, քան 2 ժամ։

13. Ո՞վ պետք է սկսի սեղանի շուրջ բիզնես հարցերի քննարկումը։

13. Պատասխան՝ հրավիրողը։ Սեղանի շուրջ բիզնես հարցերի քննարկումը գործարար ճաշի (բիզնես-լանչի) կարևոր մասն է, բայց այն չպետք է ստվերի սնվելը։ Այստեղ կարևոր է "ոսկե միջինը"՝ ն՛ ուտել, ն՛ գործով խոսել։

14. Ո՞վ պետք է վճարի գործարար ճաշի (բիզնես-լանչի) համար։

14. Պատասխան՝ իհարկե հրավիրող կողմը պետք է վճարել գործարար ճաշի (բիզնես-լանչի) համար։

15. Ի՞նչ է արգելվում է գործարար ճաշի (բիզնես-լանչի) ժամանակ՝

15. Պատասխան՝

ա. հրավիրող կողմի ուշանալը.

բ. ծխելը.

գ. հրավիրող կողմը ճաշի սեղանի շուրջ առաջինը նստելը.

դ. հեռախոսը և/կամ մեքենայի բանալիները սեղանին դնելը.

ե. ճաշը մատուցելուց անմիջապես հետո այն ճաշակելը

զ. հրավիրողի կողմից հրավիրվածից ավելի շուտ ճաշելն ավարտելը.

է. առաջին կենաց-բաժակը հրավիրվածի կողմից բարձրացնելը.

ը. միմիանց համար կենաց -բաժակ բարձրացնելը.

թ. գործարար ճաշն (բիզնես-լանչն) ավարտվելուց հետո հրավիրողի կողմից առաջինը ճաշի սեղանից վերկենալը.

ժ. մատուցողից պահանջել հաշիվը։ Վճարման հետ կապված տհաճ իրավիճակներից խուսափելու համար գործարար լանչի համար վճարումը պետք է կատարել աննկատ կամ վճարման մասին անհրաժեշտ կլինի նախապես խոսել մատուցողի հետ։